

- 43 Ապա լցեալ սրտին փափագ՝
Գրկէր հապճեպ զիւր նոր վիճակ,
Որու՛մ բազում էր ժամանակ,
Յորմէ հետէ բաղձայր անյագ:

Ե Ր Ք Ե Ր Կ Ր Ո Ր Ք

Որ պատէ Սարգսի յուսման կրթութիւն,
Սարկաւագութիւն, Քահանայութիւն,
Վարդապետութիւն, զԱստուծոցութիւն
Ի՛սառ Էջմիածին զուղեւորութիւն:

- 1 Սարգիս մեր ահա սիրով կամովին
Աշակերտ եղեալ Յօհաննու մեծին,
Կոստանդ^Օնուպօլսոյ քաջ Պատրիարքին,
Լընոյր առ նա միշտ զըղձանս իւր սրտին:
- 2 Որ եւ հանապազ եւ յօժարովին
Աշխատասիրեալ ըստ կարի անձին,
Ի պահ տըւընջեան եւս ի գիշերին,
Հետեւէր ըղձիւ ուսման իմաստին:
- 3 Եւ ըստ տըւընթեան Հոգւոյ անեղին,
Ուսանէր նա անգ ողջ բոլորովին,
Ըզպիտանացուն նաեւ զարժանին,
Ի սակս որոշեալ նորոգ վիճակին:
- 4 Ապա դիտելով ժիր վարդապետին.
Ըզյառաջանալն իւր աշակերտին,
Լինէր բերկրալից յիւրում իսկ սրտին,
Յնծութեամբ կարի եւ անհնարին:
- 5 Վասն որոյ ջանիւ իւրով գլխովին,
Թէ յեկեղեցւոջ եւ թէ առանին,
Հօրահանգեալ մարդէր ի յուսմունս նրբին,
Ըզհամբակութիւն Սարգսի անվարժին: